

եկեղեցւոյ մէջ Գաւառ. Ժողովրդի որ լսեց առաջն. Տեղապահ Ս. Հօր միամեայ պաշտօնավարութեան համարատուութիւնը և սուաշարկութիւնը առաջնորդ ընտրելու:

— Ս. Պատրիարքը Թեյեան և Մելիքեան էփեմերու հետ այցելեց ազգային հիւանդանոցը որբերու ուսումնական արհեստական վիճակը աչքէ անցնելով, կարգադրեց, որ արհեստական ծիւղերու մէջ որբերու թիւը աւելնայ և ասոնք մինչև կէս օր ուսման և կէս օրէն յետոյ արհեստի հետևին միջոցեւ հիմա շարաթը 6 ժամ միայն ուսման կը հետևին, Մանաւորապէս յանձնարարուելը է որ սկիզբի թղթի աշխատանքին մէջ որբերու թիւը աւելցուի: Ս. Պատրիարքը այցելեց նաև Հիւանդանոցի զանազան յարկերը:

— Բարիդի արուեստօճանդէսին օսմանեան բաժնին մէջ ելեքտրական արօր մը ցուցադրած էր Պօղոս փաշայ Նուպար, որ արծաթ շքադրամ մը ստացած է այս անգամ: Քրանսական գիտական և երկրագործական թերթերը յօդուածներ նուիրած են Հայ մեքենագէտին այս աշխատութեան նկատմամբ, որ իր տեսակին մէջ լաւագոյնն է, ինչպէս կապալուցանեն եղած փորձերը և քննութիւնները: Այդ թերթերը կը խօսին նաև Պօղոս փաշայի գիտական կարողութեան վրայ և կը բացատրեն իր այս գիտին արհեստական և գիտական կարեւորութիւնը:

— Մարզուանի վանքին Միաբաններէն Նիկողայոս Ա. Քրանկիւլեան Բալուի առաջն. տեղապահ կարգուած է:

— Խառն ժողովը գումարուեցաւ Սեպտ. 5ին Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարքին և ատենապետութեամբ Ստեփան փաշա Արսլանեանի և հետեւալ կարգադրութիւններն ըրաւ.

Մշոյ առաջն. տեղապահ Բարկէն Ա. հրաժարական տուած ըլլալով: Ս. Պատրիարքը յանձնարարած էր մնալ պաշտօնին մէջ, Ժողովը հաւանեցաւ այս կարգադրութեան և նոր տնօրինութիւն մը ընել աւելորդ համարեց — Գաղատիոյ առաջն. տեղապահ Եղնիկ Ա.ի հրաժարականը նկատելով, որ անձնական տկարութեանը պատճառաւ տրուած էր, հարկ դատեց ընդունիլ և Գաղատիոյ առաջն. տեղապահ կարգեց Վահան Ա. Յակոբեան: — Պարինի առաջն. տեղապահ Զաւէն, Երզնկայի Յովհաննէս Յակոբեան և Հապին Գարահիսարի Սմբատ Ա.ները նոյնպէս հրաժարական չըկած ըլլալով, անոնց մատուցած բարուր ծառայութիւններէն գոհ մնալով և անոնց ներկայութիւնը գտնուած վիճակուն մէջ օգտակար նկատելով, որոշեց գրել որ շարունակեն իրենց պաշտօնը: — Ահմայ առաջն. տեղապահ Արիստակէս Ա. ասկէ առաջ հրաժարական մատուցած ըլլալուն, Ս. Պատրիարք Հայրը յանձնարարած էր իրեն Երուսաղէմ

երթալ: Ժողովը սոյն կարգադրութիւնը ընդունելով՝ Արարիկի Եռաջնորդ Մուշեղ Ա.ին յանձնեց առժամարար Արարիկի վիճակը, որպէս զի անձամբ այցելութիւն տալով՝ հոգուէ Ահմայ վիճակի ժողովուրդին: — Ազերդի առաջն. Տեղապահ Փառէն Ա.ի հրաժարականը ընդունեց և Բգիի առաջն. Տեղապահ Վահրէճ Ա.ը Ազերդի Տեղապահ կարգելով, որոշեց Փառէն Ա.ը Բգիի առաջն. Տեղապահ կարգել: — Էտրնէի առաջն. Փոխանորդ Արսէն քահանայի և Ամասիոյ նորընտիր Եռաջնորդ Արիստակէս Ծ. Ա.ի ընտրութիւնները օրինաւոր գտնելով վաւերացուց:



ՀԱՅԵՒՈՐ ԱԶԳԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻ.

Մեր եկեղեցական անորոշ խնդիրներում մի տեղ էլ բռնում է հոգեւոր ազգակցութեան հարցը: Ժողովուրդն ու հոգեւորականութիւնը կամ աւելի լաւ ասել՝ հոգեւոր ազգակցական աստիճաններում պսակւողներն, պսակադիրն ու գործակալը անում են այն՝ ինչ որ կամենում են, ուշք չդարձնելով ընդհանուր արդտունջին՝ թէ այս պսակը չհաս է, մեղք է, չի կարելի ևլն ևլն:

Զարմանալին այն է՝ որ Լուսաւորչից մինչև այսօր ոչ մի ժողովական — եկեղեցական կանոն չկայ հոգեւոր ազգակցութեան խնդիրը որոշող և կարգի տակ ձգող, ունենք միմիայն մի քանի կաթուղիկոսական կարգադրութիւններ, որոնք բոլորովին մոռացութեան են տըրուած, թէ կանոնադիր կաթուղիկոսի օրով գործադրուած լինին այդ էլ հարց է: Ծնորհայու կարգադրութիւնը վերաբերում է մարմնաւոր ազգակցութեան, որը պահանջում է 10 աստիճանի ամուսնութիւն: Արրահամ կաթուղիկոսի 1734 թուի կոնդակը սահմանեց մարմնական ազգակցութեան համար «10 ծիւղ», խնամութեան համար «5 ծիւղ», կնքաւորութեան համար «8 ծիւղ»: հետեւելով ոչ Սոխ ժողովին, ապա Յակոբ խրիմեցու և մեր բազմաթիւ ձեռագիր կանոնագրերին: Ներսէս Ե.ի կոնդակով թոյլատրուած է հոգեւոր ազգակցու-

Թիւն մինչև 4-աստիճան: Ներկայ Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ մարմնաւոր ազգակցութեան համար որոշուեց 7 աստիճան, խնամականի համար 5 աստիճան, Դուքնի և Սփի ժողովների կանոնների հիման վրայ, իսկ հոգևորի մասին ոչ մի որոշում չեղաւ:—

Մեր ձեռագիր կանոնադրքերում (739, 745, 746, 747, 750, 756, 757, 87, 88, 89, 90, 453 համարներում և Սինոդի կանոնադրքում) կան մարմնաւոր, հոգևոր և խնամական ազգակցութեան մասին նշանակած աստիճաններ արտագրած Յակոբ Խրիմեցուց, մարմնաւորի համար 9 և 10 աստիճան, հոգևորի համար 7 և 8, խնամականի համար 5 և 6, այնպէս որ մեր կանոնադրքերի միակ կանոնադիրը Յակոբ Խրիմեցին է: Մեր եկեղեցու գործնականութեան մէջ դժբաղդարար հաստատ կարգ չկայ, մի դէպքում արգելւում է 4 հոգևոր աստիճանը, մի ուրիշ դէպքում 2-ը, երրորդ տեղում թոյլ է տրւում մինչև իսկ առաջի աստիճանը: Եւ հարցերէլ եմ 50 ծեր քահանաներից տարրեր տեղեկրում և ոչ ոքից էլ հաստատ մի բան չեմ լսել, ինչոր մի քանիսի համար չհաս է, միւսների համար հաս է:

Խնդրի այս դրութիւնը առիթ տուաւ մի քանի խօսք ասել հոգևոր ազգակցութեան մասին:

Հոգևոր ազգակցութիւնը առաջանում է նրանից, որ մէկը մկրտութեան աւագանից հանում է, կամ ինչպէս ժողովուրդն է ասում, զրկում է, խտտում է երեխային— չմկրտուածին. հանողը կոչւում է կնքահայր, մկրտուածը սանիկ, երկուսի մէջ առաջանում է հոգևոր կապ, միւսոնի կապ, որին անուանում ենք հոգևոր ազգակցութիւն կամ կրնքաւորութիւն, երկու տունը դառնում են միմեանց կնքաւորներ կամ ժողովրդական բառով քաւորներ: Կնքաւորութիւնը այնքան մեծ տեղ է բռնում ժողովրդի հոգևոր-բարոյական կեանքում, որ մինչևանգամ զրանից աւելի տուրք բարեկամութիւն նա չունի, գիւղերում կարելի է գտնել 200 տարուայ կնքաւորներ, որոնք ոչ մի խնամական կապով կապուած չեն: Ինչպէս առաջացաւ կնքաւորութիւնը:

Նախկին քրիստոնէական դարերում հրէա-

կան-մովսիսական իրաւունքը ընդունեցին բոլոր քրիստոնէաները իբրեւ գլխաւոր հիմք ամուսնական աստիճանները որոշելիս, արգելելով միայն մի քանի մովսիսական օրէնքով թոյլատրուող ամուսնութեաններ (օր. եղբոր կին առնելը) և դարձրին այդ կարգը բոլոր քրիստոնէաների համար ընդհանուր կանոն: Մովսիսականութիւնը հոգևոր ազգակցութեան մասին գաղափար չունէր. այդ մասաւ քրիստոնէութեան շրջանում: Առաքելական հրահանգները կամ սահմանադրութիւնը, որոնք ա. Է. Գ. դարերի յիշատակարաններ են, պատուիրում են, որ երեխան մկրտելիս, քրիստոնէական վարդապետութիւնը իմացող միտրէէ, անձը երաշխաւորի մկրտուողի համար, որը պիտի վերջինիս կրթի և դաստիարակի քրիստոնէական ոգով, և այդ անձը տղայի համար պիտի սարկաւազ լինի, իսկ աղջկայ համար սարկաւազուհի (տես Апостольскія постановленія): Եկեղեցու գործնականութեան մէջ բացի սարկաւազից երաշխաւոր էին լինում ծնողները և օտար մարդիկ, ահա այդ երաշխաւորները իբրեւ հոգևոր հայրեր, կրօնի դաստիարակիչներ, կոչուեցին կնքահայրեր: Մինչև Ը. դարը կնքահայրեր լինում էին ծնողներ և օտարներ, ուսուցչապետ Պաւլովը բերում է հետեւեալը յունական ձեռագրից. «Սկզբում ջրին մօտենում են երեխաները, աղամարդիկ, ապա կանայք . . . : Երեխաները եթէ մկրտուելիս կարողանում են թող իրանք պատասխանեն երէցի հարցերին, եթէ, չեն կարողանում, թող նրանց փոխարէն պատասխանեն ծնողները կամ ազգականներից մէկն ու մէկը»: Թէ այսպիսի սովորութիւն կար Գ. դարում, վկայում է երանելի Սեդուստիոսը իսկ Զ. դարի համար Կեսար Արեւատացին: Սեդուստիոսը ցաւով որտի յայտնում է, որ «քարասիրտ ծնողները ձգում են փողոց իրանց երեխաներին, որպէս զի որ և է, մէկը վերցնի և կրթի, այդ ձգածներին վերցնում են և բերում մկրտելու կոյսերը, որոնք երախայ չունին . . . » (տես Павловъ, Номоканонъ— 209—210 էր.): Կեսար Արեւատացին վկայում է, որ հրաժարիմք ի սատանայէ՝ հարցին չեն կարողանում երեխաները պատասխանել, այն ժամանակ «երաշխաւորում են նրանց

փոխարէն ծնողները: Հերակլի համար պատմում են որ 613-ին աւաղանից հանեց իւր որդուն Կոստանդինին: Իսկ արեւելքում եւ Զ. դարերում աւելի սովորութիւն էր պատուելի եւ դիտուն օտար մարդկանց կնքահայր հրաւիրել: Քան ծնողներին կնքահայր դառնալ: Այս ժամանակներում հոգեւոր չհասի խնդիր չէր ծագել երեւի թէ միմիայն սովորութիւն չէր կնքհօր եւ սանիկի ամուսնութիւնը: Իսկ սանամօր հետ ամուսնանալ կարելի էր որովհետեւ հայր ու մայր իրանց զաւակի կնքահայր էին դառնում: Քրիստոնեայ եկեղեցիներում առաջին քաղաքացիական օրէնքը Տրուլլի ժողովից առաջ՝ հրաաւարակուեց Յուստինիանոս կայսեր ժամանակ: որով արգելում էր ամուսնութիւն կնքահօր եւ սանիկի մէջ: Երկրորդ անգամ հոգեւոր ազգակցութեան աստիճաններ որոշուեցին Տրուլլի ժողովում 692 թուին: այդ ժողովի 53 յօդուածը ասում է. «Հոգեւոր ազգակցութիւնը աւելի յարգելի է քան մարմնաւորը: մենք իմացանք, որ մի քանի տեղերում կնքահայրերը ամուսնանում են սանամայրերի վրայ: որոշում ենք, սորանից յետոյ այդպիսի բան չլինի: Եթէ այդպիսիները կգտնուին նախ բաժանուեն իրրեւ ապօրինի ամուսնացողներ եւ ենթարկուին պուրնկութեան համար նշանակուած ապաշխարանքին» (книга правилъ 93 եր.): Եթէ այս կանոն արգելում է կնքահօր եւ սանիկի ու սանամօր մէջ ամուսնութիւնը: նշանակում է ծնողները իրաւունք չունին կնքահայր լինելու: այդպէս մարդ ու կին իրրեւ հոգեւոր եղբայր ու քոյր միասին ամուսնական կեանք չպիտի վարեն: Ի նկատի առնելով հէնց ժողովի աւարկութիւնը, որ կնքահայրը սանամօր հետ պատկուում է եւ այն փաստը որ մինչեւ Բ. դարը ծնողները կնքահայր էին լինում: բերում են մեզ այն եզրակացութեան: որ մինչեւ Բ. դարը մինչեւ այդ ժողովը, հոգեւոր չհասութեան խնդիր չի եղել: կնքահայրը ծիշդ է, իրրեւ հոգեւոր հայր չի պատկուել իւր սանուհու հետ: բայց սանամօր հետ պատկուել է: շատ անգամ հէնց սանամայրը կնքահօր կինն է եղել: Ինչպէս էր մեր մէջ այդ ժամանակներում հոգեւոր ազգակցութեան խնդիրը: Գր-

ժուար է արական մի բան տակ, որովհետեւ փաստ չունենք. թէ եւ Զ. դարուց յետոյ հայերը դաւանաբանական տեսակետից յարաբերութիւն կարեցին միւս եկեղեցիների հետ: սակայն հայոց եկեղեցական կանոնական կեանքը գնում էր զուգընթաց օտար եկեղեցիների կեանքի հետ: մինչեւ անգամ վերջին 4 տիեզերական ժողովներում որ չենք ընդունում մենք: ինչպէս արձանագրութիւններից երեւում է: եղել են հայոց եպիսկոպոսներ: Տրուլլի ժողովի երեք կանոնը վերաբերւո՞ւ է հայերին: այնպէս որ մինչեւ Բ. դարը: եղբւր հերսէս շինող եւ այլ առաջնորդների յարաբերութիւնը յունաց հետ շատ մտերմական է եղել: յոյները եւ հայերը խառն ապրում էին: հայերը զանուկով նրանց իշխանութեան տակ: կամայ ակամայ պիտի ենթարկուէին նրանց ազգեցութեան: նրանց եկեղեցական-կանոնական կարգերին: մանաւանդ այնպիսիներին, որտեղ դաւանաբանական հարց չկար: Այդպէս օր. լուեկայն կերպով ընդհանուր եկեղեցու կարգադրութիւնը կուսաբրոնութեան վերաբերեալ մտաւ հայոց մէջ առանց մի որ եւ է հայոց ժողովի կամ կաթողիկոսի վճռի եւ որոշման: այդպէս էլ հոգեւոր ազգակցութեան կանոնը մտած պիտի լինի մեր մէջ լուեկայն առանց մեր ազգային ժողովի վճռի եւ այսօր այդ սովորութեան մուտքը ահագին տեղ է բռնում եկեղեցու դործնականութեան մէջ իրրեւ աւանգական կարգ: Այդ հարցը ինչպիսի աստիճանական զարգացում որ ստացել է շրջապատող քրիստոնեաների մէջ, պիտի ենթադրել որ նոյնպիսի փոփոխութիւն էլ կրել է հայոց մէջ:

Թէ նորհայինս եւ թէ Սսի 1243-ի ժողովը մարմնաւոր ազգականութեան մասին խօսելիս, որոշում չեն կայացրել եւ հոգեւոր ազգակցութեան մասին: արգելօք երկեւ չեն կրել յունաց կանոնների նման կանոն մացնել: թէ բուն Հայաստանի մէջ տիրող սովորութիւններին անտեղեակ էին: յայտնի չէ, մինչեւ իսկ Մխիթար Գօշը մարմնաւորի վրայ խօսելով ոչ մի յիշատակութեան չի առնում հոգեւոր ազգակցութեան խնդիրը: Մանաւանդ որ թէ նորհայինս թէ Սսի ժողովը մարմնաւոր ազ-

գաղցուժեան աստիճանները որոշելիս, հետեւել են յունաց նոյն ժամանակուայ կանոններին: Թ. դարում յունաց եկեղեցին անպայման արգելեց 6 աստիճանը 8 աստիճանը անպայման թոյլատրել, իսկ 7-ը մնաց անորոշ, ոմանք կարելի համարեցին, ոմանք ոչ կարելի: Այդ պատճառով Պօլսում Թ. դարու սկզբին Ալէքսի կայսրութեան օրով ժողով եղաւ և որոշուեց 7 և 6-ի պտակը համարել արգելուած, բայց չքանդել, այլ միայն ասորշտարանքի ենթարկել. (Кормчая книга 50 г.): ԺԱ. դարում Միքայէլ պատրիարքը մի մասնաւոր զէպքի համար 7 աստիճանը արգելեց: ԺԲ. դարում 1168 թուին արգելուեց 7-ը աստիճանի պտակը, այգպիսի պտակը լուծել որոշուեց և պտակադիրին կարգաւործ անել. այս ժողովի վճիռը հաստատեցին Նիկիփոր և Մանուէլ Կոմնեն կայսրները. (տես Оѡзорѣ о брацѣ... Правос. соборѣ. 1858, 1859 г.): Այս վերջին կարգադրութիւնը եղաւ հիմք և Շնորհալու վճին. Շնորհալին կաթուղիկոսութիւն արաւ 1166—1173 թուականներին: Սաի ժողովը Շնորհալու 9 և 10-ի թոյլ տուած ամուսնութիւնը սահմանափակեց և 7 աստիճանի իջեցրեց. այս վերջին կարգադրութիւնը ի հարկէ իբրեւ ժողովի—պարտաւորական է բոլոր հայերի համար. Յակոբ Խրիմեցին վերցրեց իւր վրայ քաջութիւն ձեռագրութիւն կազմելու երեք տեսակ աղգակցութեան համար, զժրախտաբար մտցրեց մտացածին աստիճաններ և չունեցաւ զօրծնական հետեանք: Խրիմեցին մարմնաւորի աստիճանները որոշելիս փոխանակ Սաի ժողովին հետեւելու, հետեւեց Շնորհալուն՝ ընդունելով 8 աստիճանը չհաս և հաս միմիայն 9 և 10. և ինչու, որովհետեւ ըստ հինաւուրց ըմբռնման՝ ինչպէս մարդու մարմինը չորս աստիճանից է կազմուած, այնպէս էլ նախահօր արիւնը չորս յաջորդող զարմերում է շարունակուած և 5-րդ զարմում այսինքն 9 և 10 աստիճաններում բոլորովին անհետանում, ուստի և վերջին աստիճաններում թոյլատրուած է պտակ. շատ անհիմն բացատրութիւն է ի հարկէ:

Ձեւերակերպով կոտանանք.

0 հայր	
1/2	
Հաս 0 0 որդիք	
5/4	
Հաս 0 0 թոռներ	
5/6	
Հաս 0 0 ծոռներ	
7/8	
Հաս 0 0 թոռան թոռներ	
9/10	
Հաս 0 0 ծոռան թոռներ	

(Պիտի հաշուել միմիայն ուղղահայեաց գծերը և ոչ զնդակները):

Շնորհալին ասում է «Մի ոք համազգեաց» որոց արեան մերձաւորութիւն իցէ, պտակ օրհնութեան զիցէ, այլ մինչև ի յերկուց կողմանցն զչորրորդ աղգին զլուսաւորութիւնն կատարեալ ունիցին»: Խրիմեցին ասում է «Աղգականն ի չորս պորան անցանի, և ի հինգ՝ ապա խնամենան»: Արարհամ կաթուղիկոսը 1734-ի կոնդակում գրում է «Այլ և կանոնադրեմք և զուք հնազանդ լերութ, աղգականութեան Ժ. ձեռք—(տես Գեղարքունի գաւառի տեղեկագիր. 441 եր.): Ներկայ վեհափառ հայրապետը հետեւեց Սաի ժողովին, 7 աստիճանը 8-ի հետ թոյլ տալով, որն է միակ կանոնականը և ընդունելին:—

Հոգեւորի համար Խրիմեցին ասում է «Եւ կնքաւորն երեք անցանի, և ի չորսն (այսինքն պորան) խնամենան...»: Եւ կնքաւորութիւն յերիս աղգն վասն այն անցնի, զի հոգին եռամասնեայ, վասն այն երեք պորան անցանի...»: Խրիմեցին Շնորհալու դատողութեան հետեւելով մարմնաւոր աղգակցութեան չորս տարեքի բացատրութեան մէջ, նրանից էլ անցնում է նոյն ճանապարհով հոգեւոր աղգակցութեան հիմքը դանելու մէջ, իբր թէ երեք զարմը այսինքն 6 աստիճանը չհաս է նրա համար, որ հոգին եռամասնից է, (Հայր Աստուած, Որդի և Հոգին Սուրբ), չորրորդ զարմում այլ ևս հոգու եռամասնից ոչինչ չկայ, ուստի կարելի է թոյլատրել, Խրիմեցին թոյլ է տալիս հոգեւոր աղգակցութեան 7 և 8 աստիճանում ամուսնութիւն, Հոգեւորի մէջ էլ հետեւել են մերոնք յոյներին, բայց յոյների վճիռը 7 աստիճանի համար ոչ մի զօրծնական հետեանք չունեցաւ: Այդ եղաւ այսպէս:

Ս. տիեզ. ժողովի 53 կանոնը արգելեց սանիկի
և սանամօր ու կնքահօր մէջ ամուսնութիւն.
քաղաքացիական օրէնքները արգելեցին կնքա-
հօր և սանիկի ու սանամօր մէջ, բացի այդ
կնքահօր որդու և սանիկի մէջ, կնքահօր որ-
դու և սանիկի ծնողների մէջ: 1107 թուին
Պօլի ժողովում Նիկօլա պատրիարքի օրով
արգելուեց մինչև 7 աստիճան, բայց ոչ որ
զօրծաղեց, այլ ընդունեցին 53 կանոնը և
քաղաքացիական օրէնքների հաստատածը, այ-
սինքն որ ամուսնութիւն կարող է տեղի ու-
նենալ կնքահօր և իւր որդոց ու սանիկի և
իւր ծնողների մէջ բացառապէս: Գուցէ այս
ատանողական զրու-թիւնը մասամբ օգնեց
մերոնց հաստատ կանոն չորոշելու մտադրու-
թեան: Խրիմեցին առաջ գնաց իւր ճիւղա-
զրութեան մէջ, թոյլ չտալով ոչ միայն կնքա-
ւորներին ամուսնանալ 6 աստիճանում, հապա
և զանազան տների երեսաններին, որոնք մի
կնքահօր սանիկ են, արգելեց ամուսնանալ
մինչև 7 աստիճան:

Չեակերպներ, կստանանք

0 կնքահայր

1	2
Հաս 0 0 երկու սան օտար տներից	
5	1
Հաս 0 0 որդիք	
5	6
Հաս 0 0 թոռներ	
7	8
Հաս 0 0 ծոռներ	

0—0 կնքաւորներ

1	2
Հաս 0 0 որդիք	
5	4
Հաս 0 0 թոռներ	
5	6
Հաս 0 0 ծոռներ	
7	8
Հաս 0 0 թոռան թոռներ	

Խրիմեցու այս կանոնները արտադրեցին
կանոնադիրք արտադրողներից մի քանիսը,
չափերը սխալ, չհասկանալով բանի էութիւնը.
Ղրանց ազգեցութեան ենթարկուեց և Արրա-
համ կաթուղիկոսը 1734-ին, հրամայելով հո-
գեւոր աստիճանի ամուսնութիւնը արգելել
մինչև 8-ը (8) ճիւղը: Խրիմեցու և յունաց

մէջ ընդունուած կանոնները այն գլխաւոր
տարբերութիւնը ունին, որ այստեղ կնքաւո-
րութիւնը հասնում է 7 աստիճանի ուղղա-
գիծ և կողագիծ շառաւիղներով, մինչև իսկ
օտար ընտանիքների մէջ 7 աստիճանի ար-
գելմամբ, եթէ այդ երկու օտար ընտանիքից
մի մի երեսայ ունեցել են ընդհանուր կնքա-
հայր, իսկ յունաց մէջ պատկ արգելում է
միմիայն ուղղագիծ ժառանգների մէջ այն էլ
միայն մի ընտանիքի սահմաններում, այն է
կնքահօր և սանիկի ընտանիքում, առանց կո-
ղագիծ շառաւիղների:


Խրիմեցու այդ կնքահայր ճիւղահամա-
րութիւնը ոչնչացաւ Ներսէս Ե-ի օրով, 1851
թուին հետեւեալ առիթով: Մէկը դիմում է
Աստրախանի կոնսիստորիային և ապա Սինօ-
ղին, որ թոյլ տան 6 աստիճանի հոգեւոր աղ-
ղակցութեան աստիճանում ամուսնանալ, երբ
մերժում է ստանում, դիմում է Ներսէս
Ե-ին: Պաշտելի հայրապետ խնդրի վրայ մանր
տառերով մակագրութիւն է անում և ու-
ղարկում Սինօղին ի գործադրութիւն և
յրնդհանուր հրահանգութիւն: Այդ մակա-
գրութիւնը, որ գտնւում է Սինօղում 1851
թուի № 105 գործում, Ներսէսի ձեռքով
գրած և ստորագրած, այսպիսի բովանդակու-
թիւն ունի, առաջ եւ բերում թարգմանա-
բարձր. «Առաջագրում եմ սուրբ Եջմիածնի
Սինօղից այս զրութիւնը կնքահայրական խնա-
մութեան վերաբերեալ, որտեղ խնդրատուն
մատնացոյց անելով իւր կնքահայրութիւնը
և ամուսնանալու ցանկութիւնը, ասում է
թէ, Վարդան Պոպովը մկրտել է Աննայի որդի
Ասաբեկին, իսկ Վարդան Պոպովի որդին կա-
մենում է ամուսնանալ Աննայի եղբոր Յով-
հաննէս Մանիկեանի ազգայ Մարիամի հետ:
Այս բանը Սինօղը արգելել է կնքահայրու-
թեան օրէնքի հակառակ գտնելով: Մեզ ան-
յայտ են կնքահայրութեանց այդպիսի կանոն-
ներ կամ օրէնքներ, մենք կնքահայրերի հա-
մար օրէնք ենք համարում այս, որ մկրտուա-
ծը կնքահօր որդու հետ եղբայր լինի և
օրանց հոգեւոր և մարմնաւոր ազգակցութիւ-
նը շարունակուի մինչև երրորդ ծնունդը, իսկ
կնքահօրը և սանիկի եղբայրները կամ քոյ-
րերը և կամ հօրեղբայրները և հօրաքոյրերը

կամ մօրաքոյրը միմեանց հետ ոչ մի հոգեւոր ազգակցութեամբ չկապուեն (չպարտաւորուեն): Եւ այսպիսի մտածողութեամբ էլ ձիւղահամարութիւններ ենք դժադրել մի քանի կոնստիտուիւթիւններին համար, որ կնքաւորութիւն անեն միայն կնքողի (կնքահօր) որդոց հետ, և օտար համարեն կնքահօր արեւնակից եղբորը, քրոջը և միւս ազգականներին: Այս առաջադրում եմ Սինօղիոյ, որ խնամակալութիւն անի ժողովրդին և կարճեցնի այն նեղութիւնները, որ հոգեւոր ազգակցութեան համար կրում են ծնողները որդիներին պատկերիս:


Կաթուղիկոս ամենայն հայոց Ներսէս.
1851. 10 հոկտ.

Սինօղը մակադրութեան հիման վրայ կազմում է արձանադրութիւն և հրամայում է, զործադրել այսպէս. ուղղակի դժիւ յարատեւել միմիայն ի միջի կնքահօրն և կնքեցելոյն մինչև ցերբորդ ծնունդը:

Զեակերպինք Սինօղի մերժած ձիւղադրութիւնը.



Վարդան Պոպովը կնքահայր է Առաքելին. Վարդան Պոպովի տղայ Գրիգորը ամուսնանում է Մարիամի հետ. միացնենք հոգեւոր ազգակցութեան ձիւղահամարութիւնը միւսի հետ, կստանանք այսպիսի ձև.



Համարելով միմիայն գծերը, կստանանք վեց աստիճանի հոգեւոր ազգակցութիւն, որը Խրիմեցու օրէնքով մերժուում էր. Ներսէս Եւր այդպիսի օրէնք չգիտեմ ասելով, ընդ միշտ վերջացրեց Խրիմեցու կանոնների գոր-

ծադրութիւնը: Ուրեմն 1851-ին հայոց հայրապետ և Սինօղը միաձայն վճռեցին հոգեւոր ազգակցութիւնը ընդունել հրամայուածի նման և զործադրել: Արդեօք այդ վճիռը հայոց եկեղեցական իրաւունքի տեսակետից պարտաւորական է, բոլոր հայերի համար թէ ոչ: Մեր եկեղեցական բոլոր կարգադրութիւնները եղել են կամ ազգային ժողովների վճռով կամ Ամենայն հայոց հայրապետների կոնդակներով, եթէ վերջինների կարգադրութիւնները հակառակ չեն եղել ազգային ժողովների վճիռներին, կամ հայոց եկեղեցու սկզբունքներին և ժողովրդական դարաւոր սովորութիւններին, միշտ լուելայն ընդունուել են, ինչպէս որ Շնորհալու տաւնց ազգային ժողովի արձակած բոլոր հրամանները. և զործադրուել են առանց հակադրութիւնների: Իրաւաբանական տարրական օրէնքներով, իւրաքանչիւր օրէնսդիր մարմինից արձակած հրամանը պարտաւորական է հպատակների համար մինչև նոյնպիսի իրաւասութիւն ունեցող մարմնի կողմից, որ և է փոփոխութեան ենթարկուելը: Արովհետեւ Ներսէս Եւր արձակած հրամանը առանց որ և է տրտունջի ընդունեցին Սինօղը, կոնստիտուիւթիւնները և ընդհանուր ազգութիւնը և զործադրուեց զոնե նրա կաթուղիկոսութեան օրով, և որովհետեւ Ներսէս Եւր ամենաջերմեռանդ պաշտպանն էր համարում հայոց դարաւոր եկեղեցական կարգերին և թոյլ չէր տալիս մաղաչափ փոխել եղած կանոնները, որի փառաւոր ապացոյցն էր Վաղարեանց և Հասան-Չալալեան եպիսկոպոսի Պեանբրուրդի դէպքը, և որովհետեւ մինչև այսօր ոչ ազգային ժողով ոչ կաթուղիկոսական յետակայ կոնգակ չեն փոխել այդ կարգադրութիւնը, ուստի և Ներսէս Եւր 1851 թուի կանոնը հոգեւոր ազգակցութեան համար դրուած, պարտաւորական է բոլորիս համար, նամանաւանդ պաշտօնական մարմինների-Սինօղի, կոնստիտուիւթիւնների, Տաճկահայոց և Պարսկահայոց համար: Պարզենք Ներսէս Եւր սահմանած ձիւղադրութիւնը:

1) Կնքահայրը սանիկի վերաբերմամբ կազմում է առաջին աստիճանը իբրեւ հոգեւոր հայր: 2) Կնքահայրը սանիկի ծնողների վերաբերմամբ իբրեւ քոյր և եղբայր կազմում է

երկրորդ աստիճան: 3) Կնքահայրը սանիկի որդու վերաբերմամբ իրբե թուան՝ կազմում է երկրորդ աստիճանն 4) Կնքահայրը սանիկի թուան վերաբերմամբ կազմում է երրորդ աստիճան իրբե թուան որդի: Ձևակերպենք դժադրութեամբ:

Կնքահայր	Կնքահայր
0	0
աստիճ. 1	1
0	սան. 0
սանիկ	2
	0
	սանորդի

Կնքահայր
0
1
սան. 0
2
որդի 0
5
0
Թոռներ

1) Սանիկը կնքահայր և քաւորակնոջ վերաբերմամբ իրբե որդի առաջի աստիճանն է կազմում:

2) Սանիկը կնքահայր որդու վերաբերմամբ իրբե եղբայր կազմում է երկրորդ աստիճան:

3) Սանիկը կնքահայր թուան վերաբերմամբ իրբե եղբոր տղայի կազմում է երրորդ աստիճան:

Ձևակերպենք.

1 2 Կնքահայր և հայր
սանիկ 0 0 մարմնաւոր որդի
1 2 Կնք. և հայր
սանիկ 0 0 մարմնաւոր որդի
5
0 մարմն. թոռն

Ներսէս Ե-ի կարգադրութեամբ հոգևոր ազգակցութիւնը շարունակւում է միմիայն մինչև երրորդ ծնունդը: այսինքն երրորդ աստիճանում չի կարելի խնամի դառնալ, եթէ ձևակերպենք կստանանք այս պարզ դժադրութիւնը:

1 2 Կնք.	2 1 Կնք.
սան. 0 0 մարմ. որդի	սան. 0 0 մ. որդի
5	5
0 մար. թոռն	0
	որդի

Թոյրատրելի չէ այս պարզ ձևերում, երեք աստիճանում: Զորրորդ աստիճանում թոյլատրելի է.

1 2 Կնք.	0
սան. 0 0 մար. որդի	2 1
5 4	0 0
սան. որդի 0 0 մար. թոռն	4 5
	0 0
	5
	0

Սրանք թոյլատրելի են: Ուրեմն կնքահայրը չէ կարող պատկուտի ասանիկի ասանաւոր ասանիկի որդու ասանիկի թուան հետ. ասանիկը չէ կարող պատկուտի հոգևոր հոր, կնքահայր տղայի, կնքահայր թուան հետ. իսկ մնացած ազգականները, սանիկի եղբայրը, քոյրը կարող են պատկուտի կնքահայր, կնքահայր որդու հետ և ին. և ին. Ահա այս է մեր պարզ կանոնը: Արդեօք ժողովրդի մէջ էլ այսպէս է, եւ 50 ձեր քահանաներից զանազան տեղերում հարցրել եմ բոլորը միմիայն մի քանի կէտերում համաձայն են այն է՝ կնքահայրը չի կարող սանիկի և սանամոր հետ ամուսնանալ. իսկ մնացած բոլոր կէտերում հակառակն բաներ էին աւելում. օր. շատերը ասում էին որ կնքահայր որդին կարող է սանիկի հետ ամուսնանալ: 50 հոգուց միայն մէկը 6 աստիճանի հասցրեց, երբ պատճառը հարցրիս պատասխանեց որ զբքերում այդպէս է զբած:

Ռուսաց մէջ կնքահայրը իրաւունք չունի սանամոր և սանիկի հետ ամուսնանալ, ոչ էլ կնքամայրը սանի կամ սանահայր հետ. նրանց մէջ սովորութիւն է ունենալ կնքահայր և կնքամայր, կամ երկու կնքահայր. յունաց մէջ նոյնն է համարեա և զբանց վրայ աւելացրած երկուսի ծնողները (Չ. Բիւզ. Ժ. 534. և քաղաքացիական օրէքներ): Ներսէս Ե-ի կանոնի մէջ անորոշ բան չմնաց արդեօք. օրինակի համար, չորրորդ աստիճանը եթէ թոյլ է տալիս միայն 5-ի հետ, թէ 3-ի հետ էլ կարելի է. կանոնը որովհետեւ որոշաւ ասում է որ չհասնէ թիւը զնում է մինչև երրորդ ծնունդ, պիտի հասկանալ որ չորրորդը կա-


բող է միանալ թէ երբորդի թէ հինգերորդի հետ: Բացի դրանից մուծ է մնում և մի խնդիր արդեօք եթէ մի կնքահայր երկու օտար անից մի մի սանիկ ունիս այդ սաները կարող են ամուսնանալ: Թէ Խրիմեցու հաշուով միայն 7-րդ աստիճանում կարող են ամուսնանալ: Գոնէ իմ հարցիս 50 քահանաներն էլ պատասխանել են: Նա ո՞վ, նա ո՞վ, ի հարկէ կարող են: Այստեղ այդ մասին ոչինչ չկայ, գործնականութեան մէջ էլ շատ քիչ է պատահում այդպիսի դէպք: Կարծում եմ՝ ոչ մի հիմք չկայ թոյլ չտալու, որ բոլորովին օտար անձինք չպատկուին նրա համար, որ մէկ անձի հոգեւոր գաւալներն են:

Բացի այդ, ունինք և խաչ-քաւորութիւնները մէկը միւսի գլխին խաչ է պահում պրօսակուելիս: Եթէ պատկուողները որդի ունենան, խաչ-քաւորը կդառնայ մեռնօքաւոր: Եթէ ոչ, կմնայ հէնց խաչ-քաւոր: Ժողովրդի մէջ նոյնքան սուրբ է խաչ-քաւորութիւնը, որքան մեռնօքաւորութիւնը. ներսէս եւի կարդադրութեան մէջ չկայ երեւի նրա համար, որ քաւորութիւն ասելով հասկացում է թէ նա՝ թէ միւսը, մեռնօքաւորը միշտ լինում է խաչ-քաւոր և ընդհակառակը. այնպէս որ այստեղ էլ պիտի անշուշտ ընդունենք երեք աստիճան. 1) խաչ բռնողը պատկուողների վերաբերմամբ իբրեւ սանիկի ծնողների՝ կլինի երկրորդ աստիճանում իբրեւ եղբայր և քոյր՝ և այս աստիճանում պսակ ամենեկին չի կարելի. 2) նոյնպէս պսակ չի կարելի խաչ բռնողի որդու և պատկուողների մէջ: Գոնէ 50 քահանան միաձայն ասել են, կամ խաչ-քաւոր կամ մեռնօքաւոր տարբերութիւն չկայ:


Այլընտրանքով մեր խօսքը, կամփոփենք ճիւղադրութիւնը, որպէս զի գիւղական քահանաները լաւ յիշեն և միշտ պատժի տակ չընկնին: Մարմնաւոր ազգակցութեան համար երկու կողմից միմեանց վրայ պիտի հաշուել մինչև 7 աստիճան, 7-ից յետոյ հրաման տան առանց կասկածելու: Խնամական ազգակցութեան համար հաշուեն մինչև չորս աստիճան, 5 աստիճանում հրաման տան: Հոգեւոր ազգակցութեան համար միմիայն ի նկատի ունենան կնքահօրը և սանիկին, իսկ նրանց եղբայրները, ազգականները հաշուի մէջ չեն

մտնում, կնքահօր և սանիկի մէջ երեք աստիճանը պիտի լրացած լինի, չորս աստիճանում թոյլ տան ամուսնանան առանց երկմտելու:

1) Մարմնաւոր ազգակցութեան օրինակ.




2) Խնամականի օրինակ.



Հաս է աղայի և աղջկայ պսակը:

(Մարդու և կնոջ միջև ընդհանուր հարաբերութիւնը 4 է 3 (օ-օ)---պիտի հաշուել:)

3) Հոգեւոր ազգակցութեան օրինակ.



Հաս է աղայի և աղջկայ պսակը:

Ն. Սարկ. Մեղիք-Թանգ.

